



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 106-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի NN 24-Ա, 38-Ա, 42-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 25-ի թվով 3 (երեք) որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
 - 1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 184-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 24-Ա որոշման նախաբանի երրորդ տողի «1-ին» թիվը փոխարինել «3-րդ» թվով,
 - 2) «Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր ինսուններկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու մասին» N38-Ա որոշման՝
 - ա. նախաբանի երկրորդ պարբերության երկրորդ տողի «կետով» բառը փոխարինել «մասով» բառով, իսկ հինգերորդ տողի «ենթակետով» բառից հետո ավելացնել «,8-րդ, 9-րդ կետերով» թվերը և բառը,
 - բ. 1-ին կետի «թեմին» բառից հետո ավելացնել «(հարկ վճարողի հաշվառման համար՝ 05503942, հասցեն՝ ք. Գյումրի Ռիժկովի 6)» բառերը և թվերը, իսկ «թեմին» բառից հետո՝ «թվով 7(յոթ)» բառերը և թիվը,
 - 3) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի N 157-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 42-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության «բառերը» բառից հետո ավելացնել «և թիվը» բառերը:

Կողմ (14)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

Ա. Ադամյան
Գ. Ադամյան
Ա. Բաղդեյան

Ա.Բաղրամյան
Մ.Գաբրյան
Ա.Գրիգորյան
Վ.Եղիզարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Մ.Սահակյան

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ԾԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

17 հուլիսի 2015թ.
ք.Գյումրի

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ